ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ. Հայկական վաղքրիստոնեական ճարտարապետությունը, *Մոսկվա, «Ինկոմբուկ» հրատ., 2010, 400 էջ (87 գծագր. աղյուսակ, 221 գուն. լուս.):*

*Մուրադ Հասրաթյանի բազմաքանակ և հրատարակության հարուստ աշխարհագրությամբ գիտական աշխատությունների ցանկը համալրվեց ևս մեկ շատ արժեքավոր ուսումնասիրությամբ՝ «Հայկական վաղքրիստոնեական ճարտարապետությունը» գրքով, որը լույս է ընծայվել Մոսկվայում հայերեն և անգլերեն:*

*Գիրքը բացվում է Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հայրական օրհնությամբ, դրվատանքի ջերմ խոսքերով ու մաղթանքով՝ «Եվ թող որ «Հայկական վաղքրիստոնեական ճարտարապետությունը» գիրքը մեր ժողովրդի որդիների սրտերում մի նոր խթան հանդիսանա մեր հայրերի սուրբ ժառանգությունը պահպանելու և սերունդներին հանձնելու համար»:*

*Աշխատության տիտղոսաթերթին գրված է՝ «Նվիրվում է Հայաստանի բոլոր շինարարներին». այս ընդգրկուն մակագրությունը ևս մեկ անգամ փաստում է, որ միջնադարյան Հայաստանում չի եղել այդպիսի բաժանում՝ ճարտարապետ և շինարար (ինչպես և, ի դեպ, ճարտարապետ ու քանդակագործ), և մեկ մարդու քանքարով է պայմանավորված եղել շինության մնայուն գեղարվեստական արժեքը:*

*Գիրքը նվիրված է այն կարևորագույն շրջանին, երբ դրվեց հայկական քրիստոնեական ճարտարապետության հարուստ պատմության կայուն հիմքը. ձևավորվեցին այն բազմաթիվ տիպերը, հորինվածքները, կոնստրուկտիվ տարրերը և դեկորատիվ հարդարանքի միջոցները, որոնց զարգացումը IX–XIV դդ. ծնունդ տվեց ճարտարապետության փայլուն նմուշների: Այս փուլի նշանակությունը պայմանավորված է նաև հայ ժողովրդի գեղարվեստական մտածելակերպի և աշխարհայացքի ձևավորման ու ճարտարապետության մեջ արտահայտման գործոնով: Ինչպես գրում է Մ. Հասրաթյանը, այս գործընթացին մեծապես նպաստեց 405 թ. հայոց գրերի ստեղծումը, ինչի շնորհիվ Հայաստանը կարողացավ պահպանել իր ազգային ինքնությունը: Բնականաբար, հեղինակն անդրադառնում է նաև նախաքրիստոնեական շրջանի նվաճումների կիրառմանը քրիստոնեական ճարտարապետության ստեղծման ամենավաղ շրջանում, ինչը խոսում է շինարարական և ճարտարապետական ավանդույթների ժառանգորդության մասին:*

*Գրքում մանրամասնորեն ներկայացված են ոչ միայն պաշտամունքային կառույցները՝ իրենց ճարտարապետական կերպարներով և կոնստրուկցիաներով, շինարարական տեխնիկայով ու դեկորատիվ հարդարանքով, այլև աշխարհիկ շինությունները՝ բնակելի տներն ու պալատական համալիրները, մեմորիալ կառուցվածքները (դամբարանները, հուշասյուները, կոթողները): Կարևոր է հեղինակի միտքն այն մասին, որ IV–VII դդ. քաղաքացիական կառույցների համար թաղածածկ դահլիճի և բազիլիկայի ձևի կիրառումը, ինչպես և եկեղեցիներում ու պալատներում միևնույն հարդարանքի օգտագործումը «…ցույց են տալիս պաշտամունքային և աշխարհիկ ճարտարապետության օրգանական միասնությունը, որոնք զարգացել են միաժամանակ և ընդհանուր սկզբունքների հիման վրա՝ միմյանց անբաժանելի կապված» (էջ 42–43):*

*Եկեղեցական շենքերը տրամաբանորեն ներկայացված են ըստ տիպերի. միանավ եկեղեցիներ, եռանավ բազիլիկաներ, գմբեթավոր եկեղեցիներ՝ թե՛ երկայնական տիպի (գմբեթավոր դահլիճ և գմբեթավոր բազիլիկա), թե՛ կենտրոնագմբեթ: Միանավ եկեղեցիների մի ամբողջ խումբ՝ սրահ ունեցող եկեղեցիները (հիմնականում՝ պատմական Տաշիրի հուշարձանները), առաջին անգամ դասակարգված և առանձին խմբով ներկա-*

*յացված են Մ. Հասրաթյանի կողմից: Ներկայացնելով այս ենթախմբի բոլոր հուշարձանները՝ իրենց առանձնահատկություններով, հեղինակը նաև բացահայտում է դրանց զարգացման ընդհանուր օրինաչափությունները և համեմատական վերլուծություն է կատարում այլ երկրների նույնատիպ հուշարձանների հետ, ինչը չափազանց կարևոր է հնարավորինս լրիվ պատկերացում կազմելու վաղքրիստոնեական այս հետաքրքիր շինությունների մասին: Թե՛ ընդհանրությունների, թե՛ տարբերությունների ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի յուրաքանչյուր երկրի ճարտարապետության զարգացման ուղու ինքնատիպության բացահայտման համար: Օրինակ՝ հեղինակը նշում է, որ «հայկական միանավ եկեղեցիներում, որպես կանոն, ավանդատներն ունեն աբսիդներ և սրահի հետ չեն հաղորդակցվում, մինչդեռ վրացական և սիրիական նմանատիպ հուշարձաններում սրահը և ավանդատունը հիմնականում առանց աբսիդի են, իսկ Վրաստանում շատ դեպքերում մուտքեր կան սրահի հյուսիսային և հարավային կողմերում» (էջ 16):*

*Համեմատելով հայկական միանավները Վրաստանի, Կապադովկիայի և Սիրիայի նույնատիպ կառույցների հետ՝ Մ. Հասրաթյանը նշում է, որ վերոհիշյալ երկրներում հանդիպում են սրահով միանավ եկեղեցիներ և եռաեկեղեցի բազիլիկաներ՝ արտաքուստ շեշտված աբսիդով, մինչդեռ համանման հայկական հուշարձաններում եկեղեցիների աբսիդները և Ավագ խորանի կողքի ավանդատները ներառված են արտաքին պատերի ուղղանկյուն պարագծի մեջ: Ի դեպ, հեղինակի կողմից առաջին անգամ մասնագիտական գրականության մեջ ներկայացված են նաև արտաքուստ շեշտված աբսիդով միանավ եկեղեցիները, որոնք մինչ այդ Հայաստանին բնորոշ չէին համարվում:*

*Ճարտարապետական կապերի լուսաբանման տեսակետից հույժ կարևոր են որոշ գիտական աշխատություններում գոյություն ունեցող՝ IV–VI դդ. □սիրիական ազդեցության□ խնդրի վերաբերյալ հեղինակի պարզաբանումները: Հասրաթյանը համարում է այդ ազդեցությունը □որպես օրենք՝ գերագնահատված□: Ազդեցության տեսակետի հեղինակները իբրև գլխավոր փաստարկ բերում են Երերույքի բազիլիկայի օրինակը, որը, ինչպես գրում է Մ. Հասրաթյանը, «Հայաստանի շինարարական արվեստում մեկուսի է՝ մյուս բոլոր հայկական բազիլիկաներն իրենց ճարտարապետությամբ էապես տարբերվում են ինչպես Երերույքից, այնպես էլ սիրիական մյուս նույնատիպ հուշարձաններից: Հայ վարպետների մեծ ավանդը IV–V դդ. հանդիսացավ այն, որ նրանք հարևան երկրների ճարտարապետության նվաճումների օգտագործմանը ստեղծագործաբար էին վերաբերվում՝ այդ ձևերը և հորինվածքները վերամշակելով տեղական պայմաններին համապատասխան: Իսկ VI դ. երկրորդ կեսից Հայաստանի շինարարական արվեստի պատմության մեջ նոր փուլ սկսվեց, որը նշանավորվեց VII դ. ինքնուրույն հայկական ճարտարապետական դպրոցի ստեղծումով՝ իր գեղարվեստական սկզբունքներով և շենքերի սեփական տիպերով» (էջ 43):*

*Ինչ վերաբերում է կենտրոնագմբեթ եկեղեցիներին, ապա դրանք, հանդես գալով տարբեր ենթատիպերով, մեծ դեր ունեն համանման հուշարձանների ձևավորման գործընթացում՝ համաշխարհային ճարտարապետության համատեքստով, և գրքում դա հստակորեն ներկայացված է: Մ. Հասրաթյանը հիշատակում է պատմիչների բազմաթիվ տեղեկություններն այն մասին, որ գմբեթը Հայաստանում գոյություն ուներ արդեն IV դ.: Նա հատուկ նշանակություն է տալիս Ագաթանգեղոսի՝ Էջմիածնի Մայր տաճարի հիմնադրման հետ կապված Գրիգոր Լուսավորչի տեսիլքում գմբեթի նկարագրությանը. «Չորս սյուների խաչերի վրա զարմանատես կամարներ միմյանց կապվեցին, և դրա վրա գմբեթաձև խորանարդ տեսա» (էջ 19): Ինչպես արդարացիորեն եզրակացնում է Հասրաթյանը , գմբեթի նկարագրության որոշակիությունը վկայում է իրական օրինակների գոյության մասին:*

*Անդրադառնալով տիպի զարգացմանը, հեղինակը նշում է, որ խաչագմբեթ եկեղեցիների հետագա զարգացումը Հայաստանում բերեց այդ տիպի հուշարձանների*

*նոր՝ հետաքրքրական տարբերակի առաջացմանը՝ միայն մեկ գույգ ենթագմբեթային ազատ կանգնած հենարաններով: Հանրահայտ հուշարձանների հետ մեկտեղ՝ Մ. Հասրաթյանը վերլուծում է նաև շատ ավելի քիչ ուսումնասիրված, ընդհանրապես չուսումնասիրված և նույնիսկ այսօր արդեն գոյություն չունեցող՝ միայն գրականության մեջ պահպանված այն եկեղեցիների հորինվածքները, որոնք կարևոր դեր ունեն տվյալ ճարտարապետական տիպի զարգացման գործընթացում: Բոլոր այս տեղեկությունները կարևոր նշանակություն ունեն ոչ միայն վաղքրիստոնեական, այլև զարգացած միջնադարի ճարտարապետության վերլուծության հետ կապված բազմաթիվ խնդիրների լուսաբանման համար:*

*Գրքում տեղ է հատկացված նաև այնպիսի կարևոր ոլորտի, ինչպիսին է քաղաքաշինությունը: Վաղմիջնադարյան հայկական քաղաքներում մշակված գլխավոր սկզբունքները հիմնարար նշանակություն ունեցան զարգացած միջնադարի նշանավոր քաղաքների ստեղծման գործում:*

*«Հայաստանի վաղքրիստոնեական ճարտարապետությունը» գրքի, ինչպես և Մ. Հասրաթյանի այլ ուսումնասիրությունների արժեքն անվիճելի է ոչ միայն փաստերի ճշտությամբ ու հստակ մատուցմամբ, խիստ գիտական մոտեցումով ու վերլուծության համեմատական մեթոդով, այլև ներկայացվող նյութի նորությամբ: Նրա բազմաթիվ մենագրություններում, հոդվածներում և զեկուցումներում մշտապես նոր հուշարձաններ են ներկայացվում, նոր տեղեկություններ են գետեղվում հայ ճարտարապետության մինչև այժմ չլուսաբանված խնդիրների վերաբերյալ, զարգացման նոր օրինաչափություններ են ի հայտ բերվում: Այս երևույթն ակնհայտ է նաև նրա վերջին գրքում. հեղինակը ներկայացնում է վաղմիջնադարյան այն բազմաթիվ հուշարձանները, որոնք գիտական շրջանառության մեջ են դրված, դասակարգված և ըստ ճարտարապետական տիպերի բաժանված ի՛ր կողմից: Ներկայացված նոր նյութերը հիմնված են նաև ինչպես հնագիտական հետազոտությունների, այնպես էլ արտասահմանյան գիտնականների ուսումնասիրությունների վրա:*

*Մ. Հասրաթյանի չափագրությունների, վերլուծությունների և նկարագրությունների շնորհիվ մասնագիտական շրջանառության մեջ են դրվել այնպիսի վաղմիջնադարյան կարևոր հուշարձաններ, ինչպիսիք են պատմական Տաշիրի միանավ եկեղեցիները, Կարենիսի վանքը, Դդմաշենի, Սարակապի, Մոխրենիսի եկեղեցիները, Ամարասի դամբարանը և ուրիշներ, որոնք ներկայացված են այս գրքում:*

*Հայկական ճարտարապետության պատմության ուսումնասիրությունների շարքում շատ կարևոր տեղ գրավող այս գրքի գրաֆիկական մասը նույնպես մեծ արժեք է ներկայացնում. մանրամասն գծագրերը, հատակագծերը և կտրվածքները, ինչպես և բարձրորակ լուսանկարները հիանալի լրացնում են մասնագետների և ընթերցող լայն հասարակության համար շատ հետաքրքիր այս գիրքը:*

*Մեծապես կարևոր է և այն, որ աշխատության տեքստը տպվել է զուգահեռ նույնպես անգլերեն՝ մատչելի դարձնելով գիրքը նաև օտարալեզու ընթերցողի համար:*

ԱՆՈՒՇ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ